նատուութեան բովանդակ ծանրութիւնը Դաշնակիցների առջեւ կ՝ընկնի Վրաստանի վրայ։ Իսկ ինչ վերաբերում է Կամաւորական բանակի սպաներին, ես սկզբունքով չեմ առարկում ձերբակալութեան փաստի դէմ, որ իրաւունքն է պատերազմող կողմի, բայց ես պէտք է բողոքեմ վերաբերմունքի դէմ նրանց հետ, որովհետեւ վրայ կառավարութիւնը նրանց քրէական յանցաւորների հետ նստեցնելով բանտ, ուր նրանք պահւում են անհնարին պայմաններում, զրկում է նրանց իւրաքանչիւր պատերազմական գերիի անկասելի իրաւունքից պահուելու առանձին կայաններում»։

Ժորտանիա։— «Ամենից առաջ ես կը պատասխանեմ ձեզ դնդ. Շմադայլովի հարցի մասին։ Մենք ստացանք մահապատժի դատապարտութիւնը յետաձգելու խնդիրը, որովհետեւ նա յայտնեց, թէ ինքը Դաշնակիցների գործակալն է, բայց մինչեւ այժմ Վրաստանի կառավարութիւնը վաւերացում չունի այդ մասին»։

Զօր. Ուօկկեր։— «Այդ այդպէս է։ Բայց նրան պահում են անհնարին պայմաններում, եւ դրա հետեւանքով նա հիւանդացաւ»։

Ժորտանիա։— «Այո՛, նա հիւանդացել է, բայց հիւանդանալու փաստն ու հետեւանքները չեն կարող դրուել Վրաստանի կառավարութեան պատասխանատուութեան վրայ։ Հոկողութիւնը նրա վրայ շատ լաւ է, նրան այցելում են թէ՛ մեր եւ թէ՛ անգլիական բժիշկները։ Գնդ. Շմադայլովին տրուած է այն ամէնը, ինչ որ հարկաւոր է իրեն, եւ ոչինչ չկայ դարմանալի, որ զանուելով բանտում համառաբակի ժամանակ՝ նա հիւանդացել է ծաւոր տիֆով, այնպէս, ինչպէս հիւանդանում են եւ ազատ ապրող մարդիկ։ Ես հիմք չեմ զանում Վրաստանի կառավարութեան պատասխանատուութեան Դաշնակիցների առջեւ, որ գնդ. Շմադայլովը, ոճիր գործելով՝ բանտ է ղրրուել դատական իշխանութիւնների ձեռքով»։

Զօր. Ուօկկեր։— «Լա՛ւ»։

Ժորտանիա։— «Գնդ. Շմադայլովին այցելեցին անգլիացի սպաները եւ դրանից յետոյ հաղորդագրութիւն ուղարկեցին արտաքին գործոց նախարարութեան, որ միանգամայն բաւարարուած են գնդ. Շմադայլովի բնակարանով ու հոգատարութեամբ թիւ 2 բանտում»։

Զօր. Ուօկկեր։— «Այո՛, այդ հիւանդանոցում էր, իսկ առա՞ջ»։

Ժորտանիա։— «Այնտեղ էլ նրան լաւ էին պահում»։

Զօր. Ուօկկեր։— «Այժմ ես անցնում եմ Կամաւորական բանակի ձերբակալուած սպաների հարցին»։

Ժորտանիա։— «Մենք այդ հարցը վճռել ենք այսպէս. այն սպաներին, որոնք պարզ ռազմագերիներ են յայտարարուած, ուղարկում ենք Գորի եւ Քութայիս, իսկ նրանց, որոնք կը մեղադրուին Վրաստանի հանրապետութեան սահմաններում ապստամբութիւն կազմակերպելու գործում, կը պահենք այստեղ, մինչեւ որ քննութիւնը պարզէ նրանց յանցանքը եւ դատ լինի»։

Զօր. Ուօկկեր։— «Ի՞նչ քննութիւն եւ ինչո՞ւմ էք մեղադրում նրանց»։

Ժորտանիա։— «Այն բանում, որ Սոչիի յառաջխաղացման հետ միաժամանակ նրանք ուզում էին ապստամբութիւն բարձրացնել եւ այստեղ»։

Զօր. Ուօկկեր։— «Բայց եւ այնպէս, նը-բանք ռազմագերիներ են եւ կարելի չէ նրանց նստեցնել քրէականների բանտը»։

Ժորտանիա։— «Մենք ունենք զինուորական արդարադատութեան, բայց նրա շէնքը բաւական չէ ձերբակալուածների համար։ Այդ պատճառով մենք նրանց ուղարկում ենք Մեթեխի բերդը, ուր պահւում են իրրեւ ռազմագերիներ եւ ոչ բանտարկեալներ։ Այս կամ այն պարագան պարզելուց յետոյ նրանց ուղարկում են Գորի կամ Քութայիս»։

Զօր. Ուօկկեր։— «Շատ էլ ճիշդ ուղղութիւն չէ — Դենիկինեանների մօտ է»։

Ժորտանիա։— «Ոչինչ, նրանց քաղաքից դուրս չեն թողնի։ Իսկ հիւանդները բժշկւում են հիւանդանոցներում»։

(Շարունակելի)